

ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

*Խաչարուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
հոգեբանության րեաության և պարունության ամբիոնի վարիչ,
հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

*Խաչարուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
հոգեբանության րեաության և պարունության ամբիոնի դոցենտ,
հոգեբանական գիտությունների թեկնածու:*

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ աղետների ռիսկերի նվազեցում, հոգեբանական անվտանգություն, սոցիալիզացիա, հարմարում, գործառության վիճակ, ԱՌՆ մշակույթ, արտակարգ իրավիճակ, հոգեբանական պաշտպանվածություն:

ՀՀ իր աշխարհագրական դիրքով, հարևան երկրների հետ ունեցած տնտեսական կապերի հնարավորություններով, ռազմա-քաղաքական զարգացումների հեռանկարներով հայտնի պատճառներով գտնվում է անբարենպաստ պայմաններում: Մյուս կողմից՝ ՀՀ աշխարհագրական տարածքը հանդիսանում է ակտիվ երկրաշարժերի լեռնային գոտի, որում բնական ու նաև վերջերս հաճախակի դարձած մարդածին աղետների թիվը բավականին մեծ է: Վերջին հանգամանքը հիմք է հանդիսանում, որպեսզի ազգաբնակչության ֆիզիկական և հոգեբանական անվտանգության ապահովման համար մասնագետների լուրջ ուշադրությանն արժանանա աղետների ռիսկերի նվազեցման /ԱՌՆ/ հիմնախնդիրը: Մեր ժողովրդի պատմությունը հարուստ է անցած դարերում մեզ հասած արհավիրքների, բնական ու մարդածին աղետների վերաբերյալ հիշա-

տակումներով [3]: Հարյուրամյակների ընթացքում հայ ժողովուրդը չունենալով պետականություն, չի ունեցել նաև աղետներից պաշտպանվելու հնարավորություն ու ժամանակ առ ժամանակ դրանցից մի կերպ փրկված՝ ստիպված է եղել նորից վերականգնել արհավիրքի վնասները:

21-րդ դարը ռազմա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրադարձությունների բուռն զարգացումների առումով պակաս վտանգավոր ժամանակաշրջան չէ: Դեռ ավելին, այն իր բնությամբ հանդիսանում է երկրների միջև սուր մրցակցության, ու տարաբնույթ հեղափոխությունների ժամանակաշրջան: Դրանք իրենց ազդեցությամբ կաթվածահար են անում տնտեսապես թույլ երկրների արդյունաբերության, քաղաքական համակարգերի, տրանսպորտի ու խաղաղ ազգաբնակչության կենսագործունեության հիմքերը: Չնայած, որ ազգաբնակչության ֆիզիկական ու երկրի տնտեսական անվտանգության ապահովման նպատակով ՀՀ-ում ստեղծվել են բավականին հզոր պաշտպանական համակարգեր /հակաճգնաժամային կառավարման համակարգեր, անվտանգության հատուկ նշանակության ծառայություններ, սեյսմիկ, օդերեվույթա-

բանական ծառայություններ, տարբեր նշանակության փրկարարական, արագ արձագանքման ջոկատներ և այլն/, այնուամենայնիվ ԱՌՆ ուղղությամբ տարվող աշխատանքներում գոյություն ունեն բավականին բաց կողմեր:

Մասնագիտական գրականության ուսումնասիրություններն ու դիտարկումները ցույց են տալիս, որ աղետների կանխարգելման աշխատանքներում հիմնական տեղ է զբաղեցնում նախապես ազգաբնակչության բազմակողմանի պատրաստվածությունը [6]: Ժամանակակից ապրելակերպի պայմաններում մարդու ամենաառաջնային պահանջմունքներից մեկը թերևս հանդիսանում է հոգեբանական անվտանգության պահանջմունքը: Այս առումով՝ ինչպես առանձին անձի, այնպես էլ հասարակության բոլոր խմբերի համար պետք է գոյություն ունենան նորմատիվային ակտեր, այդ ուղղությամբ հետևողականորեն տարվող աշխատանքներ:

Կյանք մտնող երեխայի համար յուրաքանչյուր սպառնալիք գնահատվում է որպես վտանգ: Այդ մասին հուշում են նրա կենսագործունեության համար պաշտպանական գործառույթ իրականացող կենսաբանական բնագոյները [4]: Ծնվելուց հետո մարդու ողջ կյանքում առաջնային հիմնախնդիր է հանդիսանում հոգեբանական անվտանգությունը: Անձի ձևավորման բոլոր փուլերում վերջինս իր կառուցվածքային և բովանդակային կողմերով մշտապես գտնվում է փոփոխության մեջ: Հոգեբանական անվտանգության կայունությունը կապված է մարդու առողջ ապրալակերպի, երջանկության, իր և բարեկամների հարգատների առողջությամբ, երկրի սոցիալ-տնտեսական զարգացումների հեռանկարով և այլն:

Կենսագործունեության դժվար, արտակարգ իրավիճակում հայտնվելիս, մարդու օրգանիզմը դրանցում հարմարվելու և իր ամբողջականության

պահպանման համար վերակառուցում է կենսաբանական համակարգերի գործառույթային ռիթմերը: Որպես օրինաչափություն, դրանց զուգակցվում են հոգեֆիզիոլոգիական բուռն գործընթացներ, որոնց արդյունքում հաճախ օրգանիզմը գործում է իր հնարավորությունների սահմանային մակարդակում: Այս առումով՝ աղետները իրենց մեջ պարունակում են մարդու առողջության ու կյանքի կորստին առնչվող վտանգավոր իրավիճակներ, որոնց պատճառով առաջանում են վախի, սարսափի, սթրեսի ու ամենատարբեր բացասական հոգեվիճակների բազմազանություն: Կենսաբանորեն մարդու մեջ արմատավորված մահվան նկատմամբ վախը արտակարգ իրավիճակներում դառնում է իրատեսական [1]: Դրան նպաստում են նաև մարդու անցյալի վատ փորձը, նրա անկայուն տնտեսական, սոցիալական վիճակը, հարազատների անվտանգությանն առնչվող խնդիրներն ու բազմաթիվ այլ գործոններ: Մյուս կողմից՝ մարդու համար կենսական անհրաժեշտություն հանդիսացող բազմակողմանի պաշտպանվածության զգացման բացակայությունը, հոգեբանական ապահովության ու ապագայի նկատմամբ հավատի կորուստը, վատ ապրելակերպը նրանց մշտապես պահում են նյարդա-հոգեկան լարվածության մեջ: Դրանց վտանգավորությունը թաքնված է նրանում, որ ժամանակի ընթացքում աստիճանաբար իջեցնում են իրենց հնարավորությունների նկատմամբ մարդկանց ինքնագնահատականը, հասարակության մեջ լիարժեք ապրելու ինքնավստահությունն ու համարձակությունը: Թերևս հենց այս մեխանիզմով պետք է բացատրել հանրապետությունում ապրող մարդկանց հոգեբանական ընկճվածությունը, հոռետեսությունը, իրականության ու միմյանց նկատմամբ անհանդուրժողականությունն ու շատերի մոտ նկատվող հուսալքվածությունը [7]: Այս բնութագրերը հանդիսանում

են հետվնասվածքային սթրեսի /ՀՎՍ/ համախտանիշներ, որով տառապում է ազգաբնակչության մեծամասնությունը: Կյանքի դժվարություններն ու ճգնաժամային իրավիճակներում ծագող սթրեսները հանգեցնում են լարվածության այնպիսի վիճակի, որում մարդը դեռևս հներից չձերբազատված՝ բախվում է նոր հիմնախնդիրների: Մասնագիտական գրականության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից մարդու մշտական ուղեկիցները հանդիսանում են ներդոզներն ու սթրեսները, սահմանային հոգեվիճակները: Վեջին ժամանակներս հոգեբանական գրականության մեջ հաճախ է հիշատակվում արդեն դասակարգման մեջ իր ուրույն տեղը գտած «քաղաքային վախերե հասկացությունը [5]:

Այս ամենը խոսում է այն մասին, որ ժամանակակից սոցիալ-տնտեսական, ռազմա-քաղաքական զարգացումների պայմաններում գոյություն ունեցող առկա և հավանական սպառնալիքների նկատմամբ պաշտպանական համակարգերի մշակումը և այդ ուղղությամբ համապատասխան գիտելիքների տարածումը ժամանակակից պետությունների ու դրանցում ապրող մարդկանց ապրելակերպի համար հանդիսանում է պարտադիր պայման: Քաղաքակրթության նորագույն զարգացումների պայմաններում գնալով մարդը դառնում է անպաշտպան, որին զուգակցվում են անձի միայնակության, բնությունից ու հասարակությունից մշտական կախվածության ու հետապնդող վախի զգացումները: Այդ իսկ պատճառով ԱՌՆ ուղղությամբ մտածելակերպի, մշակույթի ձևավորումը, հանդիսանում է ժամանակակից մարդու ընդհանուր պատրաստության կարևոր բաղկացուցիչ մասը: Իր կառուցվածքով ու բովանդակությամբ, այն մինևս ժամանակ ուղղված է հոգեբանական պատրաստության խնդիրների լուծմանը:

Հավանական աղետների, սպառնալիքների նկատմամբ բազմակողմանի պատրաստության հիմնախնդիրը կարևորվում է նաև նրանով, 21-րդ դարի սրընթաց զարգացումների պայմաններում վտանգվում են անձի հոգեբանական պաշտպանվածությունն ու հոգեկան առողջության պահպանման գործընթացները: ԱՌՆ գործընթացի իրականացումը հնարավոր է միայն նպատակաուղղված ուսուցման ճանապարհով: Աղետներից տուժած ազգաբնակչության հետ տարված հոգեբանական վերականգնողական ու երկարատև գիտահետազոտական աշխատանքների մեր փորձը ցույց է տալիս, որ կյանքի դժվարությունների հաղթահարման, ինքնուրույնության ու արտակարգ իրավիճակներում ինքնապաշտպանության հարցում անձը հասնում է իր բարոյական կերտվածքի լիարժեքության ու հոգեբանական անվտանգության ապահովության զգացման միայն այն դեպքում, երբ նա ձեռք է բերում ինքնապաշտպանության բարձր մշակույթ ու անձնային առանձնահատկությունների մշակվածության բարձր մակարդակ: Այս ամենը պահանջում է անհատական ու խմբային պաշտպանական համակարգերի մշակում և ուսուցման ճանապարհով դրանց իրականացում: Սովորողների գիտակցությանը պետք է հասցնել մեր ժամանակներում ԱՌՆ հիմնախնդրի հույժ կարևոր նշանակությունը: Այն պեպք է հանդիսանա երկրի համար որպես ռազմավարական նշանակություն ունեցող գերակա խնդիր: Միայն հասարակության մեջ պաշտպանվածության զգացումով ապրող մարդը կարող է իրեն զգալ լիարժեք:

Ուսուցման արդյունավետության ապահովման գործում հարկի են բոլոր միջոցները: Աղետների ռիսկերի նվազեցման առումով՝ կարծում ենք, որ ամենանպատակահարմար միջոցներից մեկը հանդիսանում է արվեստը, որն այս դեպքում ուղղված է մարդ-

կանց ոգեղենության կառուցվածքային բաղադրամասերի ակտիվացմանը՝ գեղեցիկի, վեհի ու չարի, կորստի բովանդակային կողմերի, կյանքի իմաստի մեկնաբանմանը, դրանց համեմատությամբ, երևույթների աղդեցության հոգեբանական հետևանքների գնահատմանը, պաշտպանված զգալու, այդ ուղղությամբ ինքնուրույն մտածելակերպի, ինչպես նաև բարձր մշակույթի ձևավորմանը: Արվեստն իր մեջ կրում է լիարժեք, իմաստավորված ապրելու մշակույթ, պատմություն, գիտությունների համակարգեր, որին առնչվողը ժամանակի ընթացքում կերտվում և ձևափոխվում է բարոյական նորմերի պահանջներով, որտեղ պարտքի, պատասխանատվության զգացումները դառնուն են առաջնային: Միևնույն ժամանակ այն կրում է տվյալ ժողովրդի ու անհատների ստեղծած բարոյական արժեքների ամբողջությունը, որով նա դառնում է հզոր: Դրանցում կարևորագույն տեղ են զբաղեցնում մեղք, խիղճ՝ բարոյականություն եռյակը, որոնց հիման վրա ձևավորվում են մարդկային մտքի, գաղափարների իրականացման և վարքի կանոնակարգման գործընթացները, դրանց կառավարումն ու կյանքի կոչելու եղանակները: Արվեստը ինքնին անձից պահանջում է նվիրվածություն ու անձնային որակների բարձր մակարդակ, գործի նկատմամբ լուրջ վերաբերմունք: Այն իր միջոցներով արտացոլում է մարդու տառապանքները, վերաբերմունքը, ապրումներն ու ձգտումները: Հենց այս տեսանկյունից է, որ արվեստը որպես միջոց կարող է ծառայել անձի անվտանգության ու հոգեկան առողջության ապահովման նպատակով անձին սահուն կերպով ներգրավել գործընթացի մեջ:

Այս առումով՝ կարծում ենք որ Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ –ի ֆակուլտետում արդեն տեղ գտած ԱՌ–ն ծրագրային բովանդակությամբ դասերի իրականացման փորձը կարող է ուշադ-

րության արժանանալ նաև մյուս ԲՈՒՀ–երի կողմից, քանզի ԱՌ–ն գործընթացի նկատմամբ պետք է ունենալ համակարգային մոտեցում: Կարծում ենք, որ ԱՌ–ն ծրագրերի ներառումը ԲՈՒՀ–երում նախ լրջությամբ կընդունվի ուսանողների կողմից, մյուս կողմից էլ, տարբեր առարկաների մասնագետները կարող են իրենց միջոցներով (ֆիզիկայի, քիմիայի լաբորատորիաներ, մարզադահլիճներ, արվեստանոցներ և այլն) իրականացնել ծրագրում առաջադրված խնդիրը, որով նրանք լավագույն հենք կստեղծեն երեխաների շրջանում ԱՌ–ն ուղղությամբ անհրաժեշտ մտածելակերպի ու մշակույթի ձևավորման համար: Արվեստի միջոցները (օրինակ՝ Բրուկովի "Պոմպեյի վերջին օրը", Հ. Այվազովսկու "Իներորդ ալիքը նկարները", Սպիտակի երկրաշարժի վերաբերյալ ֆոտոլուսանկարները և այլն) սովորողների մոտ աղետների մասին ձևավորում են հստակ պատերազումներ, վառ երևակայություն: Դա հնարավորություն է տալիս նաև իրատեսորեն ճանաչելու հատկապես աղետների ու պատահարների բովանդակային բոլոր կողմերը: Ապագա մասնագետները, որոնք հետագայում պետք է աշխատեն երեխաների հետ, իրենց պատկերացումներով ու վերաբերմունքով կարող են ԱՌ–ն ուղղությամբ տարվող աշխատանքներում շատ կարևոր դերակատարում ունենալ:

Աղետների ռիսկերի նվազեցման մշակույթի ձևավորման գործընթացը պահանջում է այդ ուղղությամբ անհրաժեշտ մտածելակերպի ձևավորում, որը սկսվում է վաղ տարիքից: Չնայած, որ երեխաները գտնվում են ծնողների կողմից մշտական խնամքի ու պաշտպանության ներքո, բայց և այնպես յուրաքանչյուր երեխա անվերապահ պետք է տիրապետի ինքնապաշտպանության կանոններին ու ինքնուրույն գործելու վարքային նորմերին: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ պատահարների ու աղետի դեպքում երեխաները

հաճախ հանդես են գալիս միայնակ, դեմհանդիման՝ դժվարագույն խնդիրների լուծման առջև: ԱՌՆ-ի ծրագրերի ներառումը ուսումնական պլաններում շատ կարևոր քայլ է այդ ուղղությամբ անհրաժեշտ ստեղծարար մտածողության ու իրքնապաշտպանության մշակույթի ձևավորման համար: Ռիսուցման միջոցով որոշակի տեսական և գործնական հմտությունների տիրապետման դեպքում մասնակիցները կարող են արտակարգ իրավիճակներում ինքնուրույն կերպով, հնարավորինս արդյունավետ կազմակերպել իրենց անձի անվտանգության ապահովման գործընթացը:

Արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելն ու արդյունավետ գործողությունների իրականացումը գուցակցվում է իրական վտանգների, սպառնալիքների հաղթահարմամբ, որի ընթացքում հոգեկան ոլորտը հանդես է գալիս հուզական ապրումների ընդգծված դրսևորումներով [2]: Իսկ բացասական հույզերը, որպես օրինաչափություն, արգելք են հանդիսանում մարդու սթափ գործողությունների իրականացման համար: Արտակարգ իրավիճակներում դեպքերի սրընթաց զարգացումներն ու վտանգների բազմազանությունը մարդուն զրկում են իրավիճակը օբյեկտիվորեն գնահատելու հնարավորությունից: Իրադրության վերահսկման անկարողությունը մարդուն զրկվում է արդյունավետ գործողություններ իրականացնելու հնարավորություններից: Ահա թե ինչու արվեստի զանազան միջոցները, որոնք իրենց մեջ կրում են հուզական վիճակների կանոնավորման, օրգանիզմի գործառնությանի համակարգերի համագործակցության և ընդհանուր հավասարակշռության խթանման հնարավորություններ, հոգեհարազատ են գրեթե բոլոր մարդկանց և կարող են արդյունավետ կերպով ծառայել ԱՌՆ-ի ծրագրերի իրականացման գործընթացն ունի նաև որոշ հոգեբանական նրբություններ: Նախ, որ անձի կողմից ցան-

կացած ձեռնարկման մեջ ակնկալվում են կոնկրետ ադյունքներ և միևնույն ժամանակ նա գիտի թե ինչի համար է դա արվում: Երբեմն ԱՌՆ-ի ծրագրերի իրականացումը այդ պահի համար մասնակիցների մոտ շոշափելի առարկայական արդյուններ չի նախատեսում, մյուս կողմից էլ դրանց կիրառություն ստանալու հավանականությունը մոտ ապագայում չի երևում/մարդը այն կարծիքին է, որ ինքը ապահովված է բոլոր տեսակի վտանգներից և պատահարը կարող է առնչվել բոլորի հետ, բայց ոչ իր: Այդ իսկ պատճառով հաճախ այդ ուղղությամբ տարվող աշխատանքները շատերի կողմից համարվում են ձևական, իսկ երբեմն էլ ավելորդ: Այս առումով՝ համոզված ենք, որ ԱՌՆ դասընթացների հիմքում պետք է դրվեն անձի անվտանգ ապրելակերպի մշակույթի ձևավորման պահանջները՝ հենց արվեստի միջոցների օգտագործմամբ: Կյանքի անվտանգության ապահովումը մարդկանցից պահանջում է ծնված օրից մինչև կյանքի վերջը կենսակերպի ամենօրյա վերահսկողություն (սննդի, հանգստի, ռեժիմի, անվտանգության, առողջ ապրելակերպի, հոգևոր և մշակութային սննդի և այլն): Այս գաղափարների ամրագրումը սովորողներից պահանջում է ողջ կյանքում հետևողական աշխատանքների իրականացում:

ԱՌՆ ծրագրերի իրականացման գործընթացի արդյունավետության, ինչպես նաև անձի բազմակողմանի պաշտպանվածության գործընթացի ապահովման նպատակով առաջարկվում է վտանգներից պաշտպանվելու փորձնական ելույթների, մրցումային իրավիճակների, վտանգների հաղթահարման ցուցադրական ելույթների մոդելավորում և այլն: Դրանցում պետք է սահմանվեն վտանգներից, մոդելավորված սպառնալիքներից պաշտպանվելու ժամանակային նորմատիվներ, գործողությունների անթերի կատարման համար խրախուսման սանդղակներ: Աշխա-

տանքների կառուցման այդպիսի եղանակը կարող է բարձրացնել ծրագրի մասնակիցների բարժառիթների մակարդակը: Այլապես՝ այն ամենը, ինչը բավականին լուրջ ծախսերի շնորհիվ ձեռք է բերվում շատ դժվարությամբ, կարող է մոռացության տրվել, կամ էլ ժամանակի ընթացքում անտեսվել:

2013 թ.-ի ապրիլ-հունիս ամիսներին Արագածոտն, Վայք, Գեղարքունիք և այլ մարզերի դպրոցներ կատարած մշտադիտարկման այցելության արդյունքները ցույց են տվել, որ այդ ուղղությամբ տարվող աշխատանքները ուրախացնող չեն: Երեխաները տեսական մակարդակում ինչ որ չափով տիրապետում են ԱՌՆ ծրագրի շրջանակներում սերտած վտանգավոր իրավիճակների բնութագրերին և դրանցում կեղմնորոշվելու որոշ հմտությունների, սակայն մոդելների փոփոխման դեպքում՝ նրանք չեն կարողակնում կողմնորոշվել նույնիսկ հասարակ խնդիրներում:

Արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելն ու արդյունավետ գործողությունների իրականացումը գուգակցվում է իրական վտանգների, սպառնալիքների

հաղթահարմամբ, որի ընթացքում հոգեկան ուրորտը հանդես է գալիս հուզական ապրումների ընդգծված դրսևորումներով: Իսկ բացասական հույզերը, որպես օրինաչափություն, արգելք են հանդիսանում մարդու սթափ գործողությունների իրականացման համար: Արտակարգ իրավիճակներում դեպքերի սրընթաց զարգացումներն ու վտանգների բազմազանությունը մարդուն զրկում են իրավիճակը օբյեկտիվորեն գնահատելու հնարավորությունից: Իրադրության վերահսկման անկարողությունը մարդուն զրկվում է արդյունավետ գործողություններ իրականացնելու հնարավորություններից: Ահա թե ինչու արվեստի գանազան միջոցները, որոնք իրենց մեջ կրում են հուզական վիճակների կանոնավորման, օրգանիզմի գործառությանին համակարգերի համագործակցության և ընդհանուր հավասարակշռության խթանման հնարավորություններ, հոգեհարազատ են գրեթե բոլոր մարդկանց և կարող են արդյունավետ կերպով ծառայել ԱՌՆ հաջող գործընթացների կազմակերպմանն ու իրականացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մկրտումյան Մ. Պ. Արտակարգ իրավիճակների հոգեբանություն: Փրկարարների հոգեբանական պատրաստության տեխնոլոգիաներ: Երևան, 2013, էջ՝ 113:
2. Մկրտումյան Մ. Պ. Ժամանակակից մարտահրավերներին անձի հակազդման հոգեբանական առանձնահատկությունները, «Բանքեր Երևանի համալսարանի», Փիլիսոփայություն, հոգեբանություն, Եր., 2010, 13.4, էջ՝ 44:
3. Մկրտումյան Մ. Պ. Հավանական աղետների դեպքում ազգաբնակչության պատրաստության հոգեհիգիենայի համակարգը«Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, 1/14, Երևան, 2009, էջ՝ 108
4. Громбах С. М. Школа и психическое здоровье учащихся. М., Медицина, 1988. – 37 с.
5. Китаев–Смык А. А. Психология стресса. М., Наука, 1983. –368 с.
6. Малкина–Пых И. Г. Экстремальные ситуации. М., Эксмо, 2006. –774 с.
7. Петров Н. Н. Человек в чрезвычайных ситуациях. Челябинск, 1997. – 352 с.

ПОЗНАНИЕ МИНИМИЗАЦИИ РИСКА КАТАСТРОФ КАК КОМПОНЕНТ ОБЕСПЕЧЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ УЧАЩИХСЯ

МКРТУМЯН МЕЛЬС

Доктор психологических наук, профессор, заведующий кафедрой теории и истории психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

МКРТУМЯН ЛИЛИТ

Кандидат психологических наук, доцент кафедры теории и истории психологии Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье обсуждаются пути и возможности внедрения отдельных лекций и практических занятий МРК в предметные программы учебного процесса в педагогических ВУЗах РА как специальную программу для обеспечения психологической безопасности учащихся. В статье раскрываются также психологические механизмы обеспечения безопасности и сохранения целостности личности учащихся в предполагаемых экстремальных ситуациях. Предлагается комплекс мероприятий с использованием жанров искусства, лабораторий, спортзалов и т.д., а также смоделированных трудных ситуаций, с помощью которых становится возможным формировать у студентов и преподавателей первичные знания МРК. Специально разработанные программы дадут возможность будущим преподавателям обеспечить высокий уровень практических знаний и психологической подготовки учащихся при возможных катастрофах.

PSYCHOLOGICAL PREREQUISITES OF DISASTER RISK REDUCTION / DRR / AS STUDENTS PSYCHOLOGICAL SAFETY ENSURING ELEMENT

MELS MKRTUMYAN

Doctor of Psychology, Professor: Head of the Department of Theory and History of Psychology of the Faculty of Psychology and Sociology of Education in Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

LILIT MKRTUMYAN

PhD in Psychological Sciences, Associate Professor of the Department of Theory and History of Psychology of the faculty of Psychology and Sociology of Education in Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

The following article considers the ways and possibilities of the implementation of separate lectures and practical lessons of DRR in the subject programs of the educational process in the pedagogical Universities of RA, as a special subject to ensure the students psychological safety. The article also reveals the psychological mechanisms of ensuring security and preserving the integrity of individual learners in the alleged extreme situations. A set of activities with the use of art genres /canvases, photographs, laboratories, gyms, etc/ is proposed, as well as modeling of challenging situations by which it becomes possible for the teachers and students to shape primary knowledge of DRR. Special designed programs will allow the future teachers to provide a high level of practical knowledge and psychological preparation to learners in case of possible disasters.